



**YEREVAN STATE UNIVERSITY
ENGLISH PHILOLOGY CHAIR**

ARMENIAN ASSOCIATION FOR THE STUDY OF ENGLISH

**LANGUAGE AND LITERATURE IN
THE CONTEMPORARY PARADIGM
OF SCIENTIFIC KNOWLEDGE**

SCIENTIFIC JOURNAL

9

Yerevan
“Lusakn”
2018

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԼԵԶՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

9

Երևան
«Լուսակն»
2018

Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
The Journal is published by the decision of YSU Scientific Council

Գլխավոր խմբագիր՝ Ս. Գասպարյան, բ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ քրթակից անդամ,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ

Խմբագրական խորհուրդ՝

Ս. Տեր-Մինասովա, բ.գ.դ., պրոֆ.

Ա. Զորջի, բ.գ.դ., պրոֆ.

Ս. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Լ. Մաթևոսյան, բ.գ.դ., պրոֆ.

Ն. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Շ. Պարոնյան, բ.գ.դ., պրոֆ.

Գ. Մուրադյան, բ.գ.դ., դոց.

Գ. Հարությունյան, բ.գ.թ., դոց.

Լ. Կարապետյան, դոց. (պատասխ. քարտուղար)

Գ. Մադոյան, բ.գ.թ.

Editor-in –chief: S. Gasparyan, Doctor of Sciences (Philology), Prof., Corresponding
Member of RA NAS, Honoured Scientist of RA

Editorial Board:

S. Ter-Minasova, Doctor of Sciences (Philology), Prof.

A. Giorgi, Doctor of Philology, Prof.

S. Haroutyunian, Doctor of Philology, Prof.

L. Matevosyan, Doctor of Sciences (Philology), Prof.

Sh. Paronyan, Doctor of Sciences (Philology), Prof.

N. Haroutyunyan, Doctor of Sciences (Philology), Prof.

G. Muradyan, Doctor of Sciences (Philology), Associate Prof.

G. Haroutyunyan, Doctor of Philology, Associate Prof..

L. Karapetyan, Associate Prof. (executive Secretary)

G. Madoyan, Doctor of Philology

Լեզուն եվ գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում:
Գիտ. հանդես. – Եր.: Լուսակն, 2018. - 212 էջ. *Հանդեսը ընդգրկում է բանասիրական գիտելիքի հինգ հիմնական բնագավառ՝ լեզվաբանություն, լեզու. ու մշակույթ, թարգմանաբանություն, գրականագիտություն, նաև դասավանդման մեթոդիկա:*

Language and Literature in the Contemporary Paradigm of Scientific Knowledge.
Scientific Journal. – Yerevan: Lusakn, 2018. - 212 p. *The Journal covers five basic spheres of philological knowledge: Linguistics, Language and Culture, Translation Studies, Literature Studies, as well as Language Methodology.*

© Ս. Գասպարյան, 2018 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	8
<i>Նաիրա Մկրյան</i>	
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ	15
<i>Աննա Կնյազյան</i>	
ԳԻՏԱՖԱՆԱՍՏԻԿԱՅԻ ՍԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	25
<i>Գայանե Մուրադյան</i>	
ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԿԶԲԱՂԱԲՑՈՒՐ.....	32
<i>Ալինա Պետրոսյան</i>	
ԼՍՏԻՆԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ	40
<i>Արմենուհի Մարտիրոսյան, Մարինե Մկրտչյան</i>	
ԳՈՎԱԶԴԻ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԷԹՆՈՄՇՆԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	47
<i>Ռուզաննա Առաքելյան, Գոհար Հարությունյան</i>	
ԵԶՐՈՒՅԹԻ ԵՎ ԲԱՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ԴԻԱՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	54
<i>Հասմիկ Ղաջոյան</i>	
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ՀԻՆԳ ՀՈԼՈՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՃՇԳՐԻՑ ԼԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԵՂԱՆԱԿ	63
<i>Աստղիկ Մխիթարյան</i>	
ԽՈՍՔԱՅԻՆ ԵՐԳՈՐԾՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԱՌՑԱՆՑ ԳՈՎԱԶՂԱՅԻՆ ՄԵԴԻԱՏԵԲՍԵՐՈՒՄ.....	69
<i>Համլետ Առաքելյան</i>	
ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԻ ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	76
<i>Մարիամ Գևորգյան</i>	
ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	88
<i>Միրարփի Կարապետյան</i>	
ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՔՍԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	97
<i>Նարե Զորանյան</i>	

ՖԵՆՈՐՁԻ ՈՃԱԺԱՆՐԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՔԻՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	103
<i>Անի Տեր-Պետրոսյան</i>	

THE FUNCTIONAL INTERPRETATION OF OK? IN ACADEMIC DISCOURSE	111
<i>Nare Hakobyan</i>	

ЯЗЫКОВАЯ САМОИДЕНТИФИКАЦИЯ ГОВОРЯЩЕГО	123
<i>Марика Тонян</i>	

ԼԵԶՈՒ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ	132
<i>Մարիանա Սարգսյան</i>	

ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՈՒ	146
<i>Հասմիկ Մկրտչյան</i>	

COMPARATIVE ANALYSIS OF THE PROVERBS WITH THE CONCEPT WOMAN IN ENGLISH AND ARMENIAN	153
<i>Jemma Militonyan</i>	

ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՎՈՐ և ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ	164
<i>Նարե Զաբաղյան</i>	

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂԱՎՈՐ-ԱՆՄԵՂ ԵՐԿԱՏՈՒՄԸ Զ. ԶՈՅՄԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՍԱԳԵՏԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ» ՎԵՊՈՒՄ	172
<i>Արեգա Համբարձումյան</i>	

НЕКОТОРЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ МАЛОЙ ПРОЗЫ Р.Л. СТИВЕНСОНА	179
<i>Наталья Гончар-Ханджян, Анаит Акопян</i>	

ТЕМА СМЕРТНОЙ КАЗНИ В РОМАНЕ Т.КАПОТЕ ХЛАДНОКРОВНОЕ УБИЙСТВО	188
<i>Наре Мкртчян</i>	

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՈՍԱԶՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	200
<i>Մարիամ Առաքելյան</i>	

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՔՍԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նարե Զորանյան

Երևանի պետական համալսարան

Հոդվածը դիտարկում է իրավական գործընթացի լեզվական դրսևորման առանձնահատկությունները, ինչպես նաև լեզվի դերն ու նշանակությունը դատական համակարգում: Հոդվածը նպատակ ունի նաև բարձրացնել իրազեկման մակարդակը դատական լեզվաբանության վերաբերյալ և անդրադառնում է դատական լեզվի օգտագործման որոշակի սկզբունքների: Դատական լեզվաբանությունը կիրառական լեզվաբանության ենթահամակարգ է, որն ուսումնասիրում է քրեական և քաղաքացիական հետաքննության վերաբերյալ տեքստերի լեզվական առանձնահատկությունները: 21-րդ դարում իրավաբանների և լեզվաբանների համագործակցությունը արդարադատության բնագավառում ավելի սերտ է, քան երբևէ, ուստի լեզվաբանները պետք է ընդլայնեն իրենց գիտելիքները միջազգային իրավունքի, մարդու իրավունքների միջազգային հարցերի վերաբերյալ ճիշտ մոտեցումներ ցուցաբերելու լեզվի կիրառմանը այդ ոլորտներում:

Բանալի բառեր. *կիրառական լեզվաբանություն, դատական լեզվաբանություն, դատաիրավական տեքստեր, միջազգային իրավունք, իրավական գործընթաց, քրեական գործի փաստարկների շարադրում, տեքստի վերլուծություն:*

Ներածություն

Դատական լեզվաբանությունը կրում է միջգիտակարգային բնույթ և ներառում է լեզվաբանության, ճարտասանության, իրավաբանության, հոգեբանության, փաստարկման տեսության, հոգեվերլուծության և այլ գիտությունների հիմքերը: Այն կիրառական լեզվաբանության ճյուղ է, որը կիրառելի է երեք հիմնական ոլորտներում. գրավոր իրավական տեքստեր, խոսակցական իրավական պրակտիկա, ինչպես նաև քրեական ու քաղաքացիական հետաքննության ու դատական վեճերի վերաբերյալ ապացույցների տրամադրում (Coulthard, Grant and Kredens 2010):

Դատական լեզվաբանության ստեղծումը, որպես լեզվաբանության ուսումնասիրության առանձին դաշտ, կիրառական լեզվաբանության մեջ հաճախ կապվում է Յան Սվարտվիկի անվան հետ: Ինչպես դատաբժշկական լեզվաբանությանը վերաբերող շատ վաղ հրապարակումներում, այնպես էլ Սվարտվիկի «Էվանսի հայտարարությունները. Դատական լեզվաբանության գործը» (Svartvik 1968) աշխատությունը մանրամասն նկարագրում և քննարկում է դատական եզրակացություններ տալու համար օգտագործվող մեթոդները տեքստի մեջ: Իր հրապարակման մեջ Սվարտվիկը ներկայացրել է իր վերլուծությունը Թիմոթի Էվանսի՝ ոստիկանությանը տված իր «խոստովանության» վերաբերյալ: Էվանսը մեղադրվում էր իր կնոջը և շատ երիտասարդ դստերը սպանելու մեջ և մահապատժի ենթարկվեց 1950 թ. -ին: Սվարտվիկը օգտագործեց որակական և քանակական վեր-

լուծության համադրություն՝ փաստաթղթերի հեղինակության մասին կասկածի տեղիք տալու համար: Նա ցույց տվեց, որ հայտարարություններում առկա են անհամապատասխանություններ, ներառյալ նկատելի քերականական տարբերություններ հանցագործության մեղադրանքի բաժիններում և ապացուցեց, որ այդ լեզվական առանձնահատկությունները ցույց են տալիս, որ եթե ոստիկանությունը տեքստային հավելումներ չաներ և եթե քննիչները ճնշում չգործադրեին Էվանսի վրա, ապա նա անմեղ կճանաչվեր: Այս դատական գործում անսպասելի շրջադարձ եղավ երկու տարի անց, երբ Ջոն Քրիստին, Էվանսի հարևանը, ձերբակալվեց և դատապարտվեց՝ ութ կանանց սպանության համար: Այդ ութ կանանցից երկուսն Էվանսի կինն ու դուստրն էին: Ջոն Քրիստին կախաղան հանվեց 1953 թ.-ին, իսկ Էվանսը հետմահու արդարացվեց:

Այսօր դատաբժշկական լեզվաբանության միջազգային ասոցիացիան աշխատում է դատական լեզվաբանական փորձագետների համար ստեղծել չափանիշներ: Ակնհայտ է, որ օրենքը մեծապես կախված է լեզվից, և ինչպես ասում է Գիբբոնսը. «Օրենքը անհաղթահարելի լեզվաբանական համակարգ է: Օրենքները կողավորված են լեզվով և հասկացությունները, որոնք օգտագործվում են օրենքը կառուցելու համար, հասանելի են դառնում միայն լեզվի միջոցով (Gibbons & Turell 2008):

Իրավագիտության մեջ իրավունքը սահմանվում է որպես հաղորդակցության հատուկ ձև, որն ունի իր առանձնահատկությունները՝ համեմատած այլ հաղորդակցական գործունեության տարատեսակների հետ: Իրավունքի հաղորդակցական ասպեկտի ըմբռնումը հանգեցնում է այն բանին, որ այն դիտարկվում է որպես հարաբերությունների համակարգ, որի սուբյեկտները իրավական տեղեկատվություն են ստանում և փոխանցում են իրավական տեղեկատվությունը իրավական փաստաթղթերի միջոցով, որոնք ստեղծվում են սեփական պարտավորությունների և իրավունքների իրականացման արդյունքում: Իրավունքը, այսպիսով, համարվում է և՛ որպես առանձնահատուկ սոցիալական լեզու, և՛ որպես սոցիալական փոխազդեցության բազմակողմանի, ունիվերսալ միջոց, որն իրենից ներկայացնում է իրավական հաղորդակցման հաճախակի վերարտադրության գործընթաց (Поляков 2001):

Բանավոր և գրավոր դատաիրավական տեքստեր

Լեզվաբաններն ընդունում են, որ բանավոր և գրավոր դատաիրավական տեքստերի միջև տարբերությունը որոշ չափով անհասկանալի է և կամայական: Ոստիկանության նախազգուշացումը գրավոր իրավական տեքստի լավ օրինակ է, որը պետք է իրականացվի որպես բանավոր տեքստ: Նախազգուշացումը հարտարարություն է, որ ոստիկաններն անում են կալանավորվածներին զգուշացնելու իրենց իրավունքների մասին: Ինչպես օրինակ, ՀՀ օրենսգրքի 336 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամբաստանյալին պարզաբանվում է, որ նա իրավունք ունի ցուցմունքներ չտալ, և դա չի կարող մեկնաբանվել ի վնաս նրա: Մեծ Բրիտանիայում ոստիկանության նախազգուշությունը տվյալ պարագայում այսպես է շարադրված.

“You do not have to say anything. But it may harm your defence if you do not mention when questioned something which you later rely on in court. Anything you do say may be given in evidence.”

(Police and Criminal Evidence Act, 1984, code C, p. 34)

Նախագգուշացումը կառուցված է որպես գրավոր տեքստ, բայց պետք է կատարվի բանավոր, և հենց սա է առաջացնում դժվարություններ: Լեզվաբանները զգալի մտահոգություն են հայտնել այդպիսի նախագգուշացումների պատշաճ ըմբռնման վերաբերյալ:

Ինչ վերաբերում է բանավոր իրավաբանական խոսույթին, ապա դրանք ներառում են հատվածներ բանակցություններից, իրավաբանական բնույթի խոսակցություններից, փաստաբանական գործունեությունից, իրավական տեքստերից: Այդպիսի խոսույթներում կիրառվում են ինչպես նշուրավորված, այնպես էլ ոչ նշուրավորված կադապարային դարձվածներ:

Իրավաբանական տեքստերի ուսումնասիրման գործընթացում մեծ նշանակություն ունեն ճարտասանական տեքստերը, քանի որ իրավական ոլորտը հնարավոր չէ ամբողջական ներկայացնել առանց դրանց հետևողական ուսումնասիրման: Ցանկացած համաժողով, դատական նիստ, դատավորների, հաշտարարների, երդվյալ ատենակալների հանդիպում պարունակում է ճարտասանական արվեստի տարրեր:

Ըստ Ն. Կ. Պրիգարինայի՝ դատական խոսքին բնորոշ է հոետորի և ունկնդիրների միջև հեռավորության հաղթահարումը: Դրան հասնում են դերանվանական նշույթների կիրառմամբ (we all, together with you / Now, we all know that the killer cut his left hand because we have the blood drops to the left side of the bloody shoe prints/): Ն. Կ. Պրիգարինայան ցույց է տալիս, որ հոետոր-դատավորը կամ մեղադրող կողմը տարբեր հնարներ է կիրառում դատական ընթացակարգում տեղ գտած թեժ պայքարը, հակադրվող կողմերի հակամարտությունը ցույց տալու համար (Пригарина 2009):

Երկլեզու իրավական համակարգ

Մեկ այլ հարթակ, որտեղ դատական լեզվաբանները կարող են զգալի ներդրում ունենալ, երկլեզու իրավական համակարգն է: Շատ իրավաբաններ և լեզվաբաններ «միալեզու» դատական դահլիճը համարում են ավելի հարմար, սակայն գնալով աճում է այն մարդկանց թիվն, ովքեր հայտնվում են այնպիսի դատական իրավիճակում, որտեղ չեն խոսում իրենց մայրենի լեզվով: Հաղորդակցական դժվարությունները առաջանում են ոչ միայն երկրորդ լեզվի չիմացության պատճառով, այլև մշակութային տարբերություններից: Այդ տարբերություններից մի օրինակ է «լռությունը»: Իտալական կամ իսպանական մշակույթում երկար ժամանակ լռելը կարող է ցույց տալ անորոշություն, որը կարող է նվազեցնել վկայի ցուցմունքի հավաստիությունը: Մինչդեռ, Ասիական մշակույթում, ինչպես նաև Հայաստանում, լռությունը կարող է դիտվել որպես հարգանքի նշան, ցույց տալու, որ պատասխանելուց առաջ վկայություն տվողը հարցի մասին մտածում է:

Իրավական համակարգերի տարբերություն

Անգլերեն իրավական տեքստերում, օրինակ՝ իրավական փաստաթղթերում, հաճախ են կիրառվում եզրույթներ, որոնք Հայաստանի իրավական համակարգում ուղղակիորեն գոյություն չունեն: Հետևաբար, դրանք թարգմանվում են իմաստային առումով հնարավորինս մոտ բառերի օգնությամբ: Իրավական փաստաթղթերի թարգմանության ընթացքում թիրախ լեզվում լակունայի առկայության դեպքում հաճախ կատարվում է եզրույթի տառադարձում, օրինակ՝ անգլերեն փաստաթղթերում առկա եզրույթների համարժեքների բացակայությունը թիրախ լեզվում ստիպում է թարգմանչին փոխառել բառը աղբյուր լեզվից թիրախ լեզու տառադարձությամբ, որը վերջին տասնամյակում դարձել է ավելի ընդունելի, քան եզրույթի թարգմանությունը, քանի որ թիրախ լեզվում գոյություն ունեցող համարժեքը կամ նոր ստեղծված եզրույթը շատ հաճախ իր իմաստային ծավալով չի համապատասխանում աղբյուր տեքստի եզրույթին: Օրինակ՝ «coach» բառը ընդունված է թարգմանել «քուռ» կամ «քուս», կամ օրինակ «franchise»-ը՝ «ֆրենչայզինգ» (<<http://www.arlis.am>>):

Իրավական համակարգերի տարբերությունը ազդում է իրավական տեքստերը վերլուծելու և թարգմանելու ձևի վրա: Ինչպես Նյումարկն է նշել, ոչ տեխնիկական տեքստերում թարգմանիչը բառային համարժեքությունն ու իմաստային համապատասխանությունը պահպանելու համար պետք է ընթերցի ամբողջ տեքստը, նույնիսկ մեկ կամ մի քանի անգամ, որոշում կայացնի կիրառվելիք նորմերի ընտրության հարցում (Newmark 1988): Սա հաճախ պարտադիր է այն դեպքում, երբ անհնար է տեքստի միայն մի փոքր հատվածը ընթերցելով՝ հասնել թարգմանության համարժեքության: Մակայն իրավական տեքստերը արագ թարգմանելի են՝ չնայած իրենց բարդ լեզվին: Հաճախ իրավական տեքստերի թարգմանության դեպքում թարգմանչին բավարար է պարբերությունը մեկ անգամ ընթերցել, քանի որ այն պարունակում է մեկ ամբողջական իրավական գաղափար, պայման, կանոն և եզրակացություն: Փաստաթղթի վերնագիրը կարող է ինքնին մի քանի բառային լուծում տալ թարգմանչին: Օրինակ՝ լիազորագրի մեջ ենթադրվում է, որ գործողության կրողը «լիազորված անձն» է, ով գործում է «լիազորողի» անունից: Ընդ որում՝ անգլերենում լիազորագիրը թարգմանվում է «letter of attorney» կամ «power of attorney», որտեղ attorney բառը կորցրել է բառարանային իր առաջին նշանակությունը՝ որպես փաստաբան և փաստաթղթի տեսակից ելնելով՝ ստացել նոր նշանակություն՝ «լիազորող» (<<http://www.strategiimanagieriale.ro>>):

Ապրանքանիշների կիրառում

Դատական լեզվաբանության մեկ այլ նախադեպ է ապրանքանիշների կիրառումը: Այդ դատական գործերից մեկն է *McDonald's* արագ սննդի ապրանքանիշի վերաբերյալ դատավճիռը՝ կապված *Mc-* նախածանցի հետ: *Quality Inns* ընկերությունը մտադիր էր բացել *McSleep* հյուրանոցների ցանց, սակայն, *McDonald's* կորպորացիան դատական հայց ներկայացրեց՝ համոզմունք հայտնելով, որ *Mc-* նախածանցի օգտագործումը կեղծ տպավորություն է թողնում, որ նրանք *McDonald's*-ի ֆրենչայզի մի մասն են: Հայցվորը ոչ միայն անուղղակի սեփականության իրավունք էր հայտարարում *Mc-* նախածանցի վերաբերյալ, այլև հայց էր

ներկայացնում դատարանին՝ արգելել ձևաբանական սկզբունքով *Mc-* նախածանցի հավելումը ցանկացած ապրանքային նշանի: Դատարանը վճռեց գործը փակել *McDonald's*-ի, իսկ *McSleep* հյուրանոցների ցանցը ստիպված էր գտնել մեկ այլ անվանում:

Հայաստանի հանրապետությունում ապրանքային նշանի կիրառման նմանատիպ դատական գործ է ընթացել *Ucom* և *Utaxi* ընկերությունների միջև: Այս դեպքում «Յուքոմ» ընկերությունը պահանջում էր «Յուտաքսի»-ի գործողությունները որակել որպես անբարեխիղճ մրցակցություն և պարտադրել վերջինին՝ դադարեցնել «Utaxi» ապրանքային նշանի օգտագործումը՝ մասնավորապես վերցնելով Ս տառի մենաշնորհը: Այս դատական հայցը ՀՀ Տնտեսական Մրցակցության Պաշտպանության Պետական Հանձնաժողովը 2017 թ. Հոկտեմբերի 30-ին բավարարվեց մասամբ՝ պահանջելով «Յուտաքսի» ընկերությունից միայն ապրանքային նշանի գույների փոփոխություն:

Դատական լեզվաբանության մեջ նման գործընթացները բավականին շատ են, ուստի իրավական լեզվաբանի ճշգրիտ մոտեցումը և օժանդակությունը մեծապես կարող են նպաստել դատական հայցը շահելու գործին:

Եզրակացություն

Սոցիալական լրատվամիջոցները, ինչպիսիք են *Twitter*-ը, *Facebook*-ը այսօր ավելի շատ են ներգրավված դատական գործերում, քանի որ դրանք այսօր մեր առօրյայի մի մասն են կազմում, ուստի դատական լեզվաբանները ուսումնասիրում են նաև այս հարթակների լեզվական առանձնահատկությունները:

Դեռևս հին ժամանակներից իրավաբանական տեսության մեջ առկա է եղել իրավունքի հաղորդակցական բնույթի նշանակության իմաստավորման միտումը: Լեզվական հաղորդակցման կառուցվածքում լեզուն դիտվում է արդեն ոչ թե որպես գործիք, այլ որպես իրավունքի կեցության հիմնական ձև, որը ներկայացվում է ինչպես լեզվաբանների այնպես էլ իրավագետների գիտական աշխատություններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Coulthard, M.; Grant, T. & Kredens, K. (2010) *Forensic Linguistics*. The SAGE Handbook of Sociolinguistics. Ed. by B. Johnstone, R. Wodak, & P. Kerswill. University of Lancaster, UK
2. Svartvik, J. (1968) *The Evans Statements: A Case for Forensic Linguistics*. *Gothenburg Studies in English*. Forensic Linguistics Institute, Gothenburg.
3. Gibbons, J. & Turell, M.Th. (2008) *Dimensions of Forensic Linguistics*. Netherlands: John Benjamins Publishing Company.
4. Newmark, P. (1988) *A Textbook of Translation*. US: Prentice-Hall International.
5. Пригарина, Н.К. (2009) *Риторические параметры жанра судебной речи в практике русских и англоговорящих судебных ораторов*. // Вестник МГОУ. Серия "Лингвистика". № 3. М.: Изд-во МГОУ. (Available at: <www.vestnik-mgou.ru/mag/2009/ling/3/st39.pdf> [Accessed January 2018].
6. Поляков, А.В. (2001) *Общая теория права Текст*. СПб.: Юрид. центр Пресс.

ԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. *Ucom-ի մենաշնորհը Ս տարի նկատմամբ*: Հասանելի է՝ <<https://lurer.com/?p=268928&l=am>> [Մուտք՝ հունվար 2018]:
2. *Հայաստանի Հանրապետության Քրեական Դատարարության Օրենսգիրք*: Հասանելի է՝ <<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1450>> [Մուտք՝ հունվար 2018]:
3. *Դատարժշկական Լեզվաբանության Միջազգային Ասոցիացիա*: Հասանելի է՝ <<http://www.iafl.org/>>, <<http://www.arlis.am>> [Մուտք՝ հունվար 2018]:
4. *Errors and Difficulties in translating legal texts*. Available at: <<http://www.strategiimanageriale.ro>> [Accessed September 2018].
5. *Section on Forensic Linguistics*. Available at: <<http://www.all-about-forensic-science.com/forensic-linguistics.html>> [Accessed March 2018].
6. *The Meaning of Silence in Different Cultures*. Available at: <<https://countrynavigator.com/blog/global-etiquette> > [Accessed March 2018].

The Linguistic Peculiarities of Legal-Judicial Texts

The present article deals with the study of some linguistic peculiarities of the legal-judicial texts, as well as the role and significance of language and the ways of its manifestation in the legal-judicial system. The article is also aimed at raising awareness about judicial linguistics as a sub-system of applied linguistics examining the linguistic peculiarities of the criminal and civil investigation texts. The cooperation between lawyers and linguists in the system of justice is closer than ever in the 21st century, therefore linguists, and particularly translators, should expand their knowledge of the international law and human rights issues so as to apply proper approaches to the utilization of language in this specific area.

Лингвистические особенности судебно-правовых текстов

Статья посвящена изучению некоторых лингвистических особенностей судебно-правовых текстов, а также роли и значения языка и способов его проявления в судебно-правовой системе, что повысит уровень осведомленности о судебной лингвистике как подсистеме прикладной лингвистики, изучающей лингвистические особенности текстов уголовного и гражданского расследования. В XXI веке сотрудничество юристов и лингвистов в системе правосудия стало теснее, чем когда-либо, поэтому лингвистам, особенно переводчикам, необходимо расширить свои знания в области международного права и прав человека с целью применения соответствующих подходов при использовании языка в этой конкретной области.

Մեր հեղինակները

Ալինա Պետրոսյան – ԵՊԲՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ alina.petrosyan@yahoo.com

Անահիտ Հակոբյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝
anahit.hakobyan1988@yandex.ru

Անի Տեր-Պետրոսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ aniterpetrosyan@ysu.am

Աննա Կնյազյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.
Էլ. հասցե՝ annaknyazyan@ysu.am

Աստղիկ Մխիթարյան – Վաղարշապատի Մ.Գորկու անվան հ.5 ավագ դպրոցի ուսուցչուհի
Էլ. հասցե՝ asto7@rambler.ru

Արեգա Համբարձումյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ orbisenglish@gmail.com

Արմենուհի Մարտիրոսյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ
Էլ. հասցե՝ arm.martirosyan@ysu.am

Գայանե Մուրադյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.
Էլ. հասցե՝ g.murad@ysu.am

Գոհար Հարությունյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ goharharutyunyan@ysu.am

Համլետ Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ hamlet.araqelyan@gmail.com

Հասմիկ Ղաջոյան – ՀԱՊՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikghajoyan@mail.ru

Հասմիկ Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikmkrтчyan@ysu.am

Մարիամ Առաքելյան – ՀՊՄՀ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ mariamarakelyan89@mail.ru

Մարիամ Գևորգյան – ԵՊԼՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ miriamgevorgian@gmail.com

Մարիանա Սարգսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ marianasargsyan@ysu.am

Մարիկա Տոնյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ marikatonyan@ysu.am

Մարինե Մկրտչյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ m.mkrтчyan@ysu.am

Նաիրա Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ nairamkryan@ysu.am

Նատալյա Գոնչար-Խանջյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ natalie.goncharkhanjyan@ysu.am

Նարե Հակոբյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ narekaytser@gmail.com

Նարե Մկրտչյան – Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ mkrtchyan.nare@gmail.com

Նարե Չոբանյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ nare.chobanyan@gmail.com

Նարե Ջաբաղյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ narejabaghyan@ysu.am

Ջեմմա Միլիտոնյան – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անգլերեն լեզվի և գականության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ jemmamilitonyan@yandex.com

Ռուզաննա Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ ruzanna.arakelyan@ysu.am

Միրարփի Կարապետյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ sirarpikarapetyan@ysu.am

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» գիտական հանդեսը լույս է տեսնում տարին մեկ անգամ: Հանդեսում տպագրվելու համար կարող են ներկայացվել հոդվածներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով **Sylfaen** տառատեսակով, լուսանցքները՝ 2 սմ, վերնագիրը՝ 14 տառաչափով (աջ կողմում, գլխատառերով, թավատառ), հիմնական տեքստը և ենթավերնագրերը (ձախ կողմում, թավատառ), հեղինակի անուն, ազգանունը (աջ կողմում, թավատառ), աշխատավայրը (աջ կողմում, շեղատառ)՝ 12 տառաչափով, բոլոր տողերի միջև տարածությունը՝ 1.5: Հոդվածին անհրաժեշտ է կցել հայերեն, անգլերեն և ռուսերեն ամփոփագրեր՝ 60-80 բառի սահմաններում, 7-10 բանալի բառեր (հիմնական տեքստի լեզվով), հեղինակի մասին համառոտ տեղեկություն՝ աշխատավայր, կոչում, պաշտոն, էլ. հասցե, հեռախոսահամար (հայերեն):

- Տեքստը բաժանել հետևյալ մասերի՝ ներածություն, ենթաբաժիններ և եզրակացություն:
- Այլ հեղինակների մեջբերումները՝ չակերտների մեջ, որպես տեքստի շարունակություն /եթե կարճ է/ կամ նոր տողից /եթե երկար է/:
- Այլ հեղինակների աշխատությունների վերնագրերը՝ չակերտների մեջ:
- Փաստացի օրինակները՝ շեղատառ, առանց չակերտների: Եթե օրինակները ներկայանում են մեկից ավելի նախադասություններով, առանձնացնել տեքստից՝ վերևում և ներքևում թողնելով մեկական տարածություն: Օրինակի մեջ ուշադրության արժանի բառերը կամ բառախմբերը ներկայացնել թավատառ:
- Տեքստում աղբյուրը ներկայացնել հետևյալ ձևով՝ փակագծերում տալ հեղինակի ազգանունը և հրատարակչության տարեթիվը: Եթե մատնանշվում է էջը՝ տարեթվից հետո դնել հայկական վերջակետ, նշել էջը: Օրինակ՝ (Svartvik 2005) կամ (Bronfen 1992:330):
- Ծանոթագրությունները՝ հոդվածի վերջում, գրականության ցանկից առաջ:
- Գրականության ցանկը ներկայացնել **այբբենական կարգով**՝ խստիվ հետևելով ներքոնշյալ կանոններին՝
հեղինակի ազգանունը, անվանատառերը, (հրատարակման թվականը), աշխատանքի վերնագիրը (շեղատառերով, առանց չակերտների), հրատարակման վայրը, հրատարակչությունը, հայկական վերջակետ:

Օրինակներ՝

- 1.Ջահուկյան, Գ.Բ. (2003) *Շարահյուսական ուսումնասիրություններ*. Երևան: Ստոդիկ հրատարակչություն:
- 2.Eisenstein, E.L. (1979) *The Printing Press as an Agent of Change*. Cambridge: CUP.
- 3.Myer, T. (1997) *The Language of Science*. Available at: <<http://www.sfsite.com>> [Accessed June 2012]
- 4.Redbury, M. (2003) *Language and Discourse*. // *Investigations in Linguistics*. / Ed. by R.K. Smith. New York: Redgate Inc.
- 5.Svartvik, J. (2005) *A Life in Linguistics*. // *The European English Messenger*. / Ed. by J.A. Stotesbury. Vol.14 (1). Portugal: Grafica de Coimbra.
- 6.(1998) *Oxford Advanced Learner's Dictionary of Current English*. Oxford: OUP.

- Հոդվածի էլեկտրոնային տարբերակը ուղարկել afajournal@ysu.am էլ. հասցեին:

Հասցե՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1,
Երևանի պետական համալսարան
Հեռախոս՝ (+374 60) 710 546
Էլ. հասցե՝ sedagasparyan@ysu.am, afajournal@ysu.am

«ԳԵՎՈՐԳ - ԳՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52.79.74
Էլ. փոստ lusakn@rambler.ru